

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 37/08

Քաղ. Երևան

8 դեկտեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Յ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստում (արձանագրություն № 66/5) քննարկեց ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. օգոստոսի 16-ի դիմումը EASTERN COMPANY S.A.E. (EG) ընկերության IR 692750 միջազգային գրանցամաք STYLE ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով Հայաստանի Հանրապետության տարածքում վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ «Նահապետ և Կ» ընկերության կողմից կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ EASTERN COMPANY S.A.E. (EG) ընկերության անունով ԱԾՄԴ 34-րդ դասի ապրանքների համար գրանցված STYLE (IR 692750) համակցված ապրանքային նշանը չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում: Ելնելով դրանից և առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի «Ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ բոլոր ապրանքների, որոնց համար այն գրանցված է, կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն անընդհատորեն (ընդհանրապես) չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ օրենքի 26 հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից», դիմողը խնդրել է STYLE (IR 692750) ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն

20.08.08թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ տեղեկացրել է STYLE (IR 692750) ապրանքային նշանի սեփականատեր՝ EASTERN COMPANY S.A.E. (EG) ընկերությանը (Eastern Company S.A.E., Magda Mohamed Salah Eldin Rostom, 450, Avenue des Pyramides, Guizeh, EGYPT) բողոքարկման խորհրդի կողմից ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. օգոստոսի 16-ին ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. սեպտեմբերի 29) և վայրի մասին՝ կցելով դիմումի պատճենը: Չստանալով սեփականատիրոջից ոչ մի արձագանք և հաշվի առնելով, որ դիմումի քննարկումը հետաձգվել է և նշանակվել 2008թ. դեկտեմբերի 5-ին, և այն հանգամանքը, որ, ինչպես պարզվեց, ROMARIN ապրանքային նշանների միջազգային գրանցումների հիմնապաշարում նշված էր սեփականատիրոջ՝ Eastern Company S.A.E. (EG) ընկերության սխալ հասցեն, բողոքարկման խորհուրդը նպատակահարմար գտավ 06.10.08թ. նորից ծանուցել սեփականատիրոջը՝ արդեն իր նոր, ճշտված հասցեով (Eastern Company S.A.E. 450 Al Ahram St. Giza EGYPT) :

Սակայն համապատասխան փոստային ծանուցագիրը ետ չի վերադարձել և որևէ տեղեկություն չկա այն մասին, թե հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստացվել է, թե ոչ: Բողոքարկման խորհրդի 2008թ. դեկտեմբերի 8-ի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև բողոքարկման խորհուրդը դիմումի վերաբերյալ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցիչից չի ստացել:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում բողոքի ըստ ելույթի քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը հանգեց հետևյալ եզրակացության:

Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները ներկայացնում է դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ Eastern Company S.A.E. (EG) ընկերությունը, որի պատշաճ ծանուցելու հնարավորությունները սպառված են, նկատի ունենալով 20.08.08թ. և 06.10.08թ. հետծանուցմամբ փոստային առաքմամբ ուղարկված ծանուցումները, սակայն ապրանքային նշանը ՀՀ-ում օգտագործելու վերաբերյալ որևէ փաստ, ապացույց կամ որևէ գրավոր արձագանք սեփականատիրոջից կամ նրա ներկայացուցիչից այդպես էլ չի ներկայացվել, հետևապես բողոքարկման խորհուրդը գտնում է, որ սպառվել են սեփականատիրոջ՝ Eastern Company S.A.E. (EG) ընկերությանը ծանուցելու իր հնարավորությունները, սակայն STYLE (IR 692750) ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, իչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. օգոստոսի 16-ի դիմումն ամբողջովին և Eastern Company S.A.E. (EG) ընկերության ՍՊԸ-ի STYLE (IR 692750) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան